



Բովանդակություն

Ներածություն.....	3
Նպատակներ.....	3
Նպատակ 1: Երեխայի պաշտպանության հիմքերը	4
1.1 Պատասխանատվությունը	4
1.2 Պաշտպանության սահմանումը.....	4
1.3 Վնասը և բռնության գործադրումը.....	5
1.4 Անվտանգության առանձնահատուկ ռիսկերը ֆուտբոլում.....	6
1.5 Ֆուտբոլից դուրս գործողությունները	7
1.6 Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը համաձայն ՀՀ օրենսդրության	7
1.7 Երեխայի պաշտպանության քաղաքականության հիմքում ընկած հիմնական սկզբունքները	8
Նպատակ 2. Կազմակերպության պատրաստվածության և կանխարգելման հիմքերը.....	9
2.1. Երեխայի պաշտպանության քաղաքականության իրականացումը.....	9
2.2 Երեխայի պաշտպանության ոլորտում պատասխանատու անձանց նշանակումը.....	10
2.3 Աշխատակիցների ապահով ընտրությունը.....	10
2.4 Վարքագծի կանոնները.....	11
2.5 Վերահսկողությունը և միայնակ աշխատելը	12
2.6 Այցելուների/ՉԼՄ-ների ներկայացուցիչների ներկայությունը ՀՖՖ մանկապատանեկան մրցումներին և այլ միջոցառումներին.....	13
2.7 Առցանց պաշտպանությունը և անվտանգությունը	14
2.8 ՀՖՖ-ի գործընկերների հետ հարաբերությունները	14
Նպատակ 3: Իրազեկումը.....	15
3.1 Իրազեկության բարձրացումը և վերապատրաստումը	15
3.2 Ռիսկերի գնահատումը.....	16
3.3 Մտահոգություն հայտնելու համար հաղորդակցման անվտանգ ուղիների ստեղծումը.....	16
Նպատակ 4. Համագործակցությունը և մտահոգությունների հայտնումը.....	18
4.1 Կապի ստեղծումը երեխայի պաշտպանության գործակալությունների հետ.....	18
4.2 Բաց աշխատանքային միջավայրի ստեղծումը	18
4.3 Դեպքերի հաղորդումը և ձեռնարկվող հետագա միջոցառումները	19
Նպատակ 5. Հաջողության չափումը երեխայի պաշտպանության ոլորտում	20
5.1 Վերահսկողության իրականացումը	20
6. Վերջնական դրույթներ	21

Ներածություն

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան (այսուհետ՝ ՀՖՖ) մշակել է երեխայի պաշտպանության քաղաքականությունը՝ երաշխավորելու, որ ֆուտբոլը բոլոր երեխաների համար դառնա և՛ զվարճանք, և՛ անվտանգ՝ անկախ տարիքից, կարողությունից կամ ներգրավվածության մակարդակից:

Քաղաքականությունը կենտրոնացած է հինգ նպատակների կամ գործողությունների ոլորտների վրա, որոնք պետք է հիմք ընդունել՝ ֆուտբոլում երեխաներին վնաս հասցնելու (բռնություն գործադրելու) ցանկացած ռիսկի կանխարգելման և պատշաճ կերպով արձագանքման համար: Թեև երեխայի պաշտպանության քաղաքականությունը նպատակ ունի լինել համապարփակ՝ հաշվի առնելով այն պարամետրերի և մակարդակների բազմազանությունը, որոնցում կազմակերպում և խաղում են ֆուտբոլ, հավանական է, որ կարող են լինել այնպիսի հանգամանքներ, որոնք դուրս են մնում այս քաղաքականության կիրառման շրջանակներից: Նման իրավիճակներում պետք է առաջնորդվել՝ հիմք ընդունելով նախևառաջ երեխայի շահը:

Նպատակներ

Նպատակ 1: Երեխայի պաշտպանության հիմքերը
Տալիս է սահմանումներ, ինչպես նաև ընդգծում քաղաքականության հիմնական ուղղությունները:
Նպատակ 2: Կազմակերպության պատրաստվածության և կանխարգելման հիմքերը
Ընդգրկում է ընթացակարգերի ստեղծման և հաստատման անհրաժեշտությունը:
Նպատակ 3: Իրազեկումը
Իրազեկմանը, վերապատրաստմանն ու հաղորդակցությունների հաստատմանն ուղղված քայլեր: Հաղորդակցության հաստատումն ու կրթությունը կարևոր են երեխայի պաշտպանության միջոցները և սկզբունքները ֆուտբոլում ընկալելի դարձնելու համար:
Նպատակ 4: Համագործակցությունը և մտահոգությունների հայտնումը
Ընդգրկում է մտահոգությունների բարձրաձայնումն ու դրանց արձագանքումը, ինչպես նաև շահառու խմբերի, գործընկերների հետ համագործակցության հաստատումը:
Նպատակ 5: Հաջողության չափումը երեխայի պաշտպանության ոլորտում
Ընդգրկում է մոնիթորինգի իրականացումն ու հաջողված դեպքերի բացահայտումը, դրանց կիրառումը որպես լավագույն օրինակ:

Նպատակ 1: Երեխայի պաշտպանության հիմքերը

1.1 Պատասխանատվությունը

1.1.1 Երեխայի պաշտպանությունը յուրաքանչյուրի պատասխանատվությունն է:

1.1.2 ՀՖՖ յուրաքանչյուր աշխատակից կամ ՀՖՖ անունից ֆուտբոլի ցանկացած մակարդակում և ցանկացած հնարավորության սահմաններում գործող յուրաքանչյուր անձ/կազմակերպություն պետք է գիտակցի երեխաների բարօրության, շահերի պաշտպանության և խթանման իր պարտականությունը, ինչպես նաև սույն քաղաքականության իրագործման համար համապատասխան քայլեր ձեռնարկելու իր պատասխանատվությունը:



Ֆուտբոլը բոլոր երեխաների համար պետք է դառնա անվտանգ, դրական և հաճելի փորձ

1.2 Պաշտպանության սահմանումը

1.2.1 Երեխայի պաշտպանության քաղաքականության նպատակներով երեխայի պաշտպանությունը սահմանվում է որպես կազմակերպության պարտավորություն, որը կերաշխավորի, որ ֆուտբոլը բոլոր երեխաների համար դառնա անվտանգ, դրական և հաճելի փորձ, որպեսզի բոլոր երեխաները պաշտպանված լինեն վնասներից (ներառյալ բռնությունը) ֆուտբոլի բոլոր մակարդակներում ներգրավվելիս:

1.2.2 Երեխայի պաշտպանությունը ներառում է ինչպես կանխարգելիչ գործողություններ, որոնք ուղղված են նվազագույնի հասցնելու վնասի հավանականությունը, այնպես էլ արձագանքող գործողություններ, որոնք ուղղված են ապահովելու բռնության գործադրման որևէ մտավախության առաջացումը, և միտված են դրան պատշաճ լուծում տալուն: Սա արտացոլում է երեխաների շահերը ներկայացնելու և դրանք միջազգային ստանդարտներին և

ներքին օրենսդրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, մասնավորապես՝ մտավախություններ կապված հնարավոր հանցավոր գործողությունների հետ:

1.2.3 Երեխայի պաշտպանության քաղաքականության նպատակով և ՄԱԿ-ի կողմից 1989թ. ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի համաձայն՝ **երեխա է համարվում տասնութ տարեկանից ցածր տարիքում գտնվող ցանկացած մարդ/անձ, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի նկատմամբ կիրառվող օրենսդրության համաձայն, չափահասությունը տրվել է ավելի վաղ:**

1.3 Վնասը և բռնության գործադրումը

1.3.1 ՀՖՖ յուրաքանչյուր աշխատակից կամ ՀՖՖ անունից ֆուտբոլի ցանկացած մակարդակում և ցանկացած հնարավորության սահմաններում գործող յուրաքանչյուր անձ/կազմակերպություն պետք է իմանա, որ բռնության գործադրման, վնասի և երեխայի պաշտպանության խնդիրները միշտ փոխկապակցված են, և հնարավոր չէ տալ դրանց մեկ ընդհանրական սահմանում:

1.3.2 Վնաս հասցնելու դեպքերը կարող են դրսևորվել բազմաթիվ ձևերով: **Վնասն այն իրավիճակն է, երբ վտանգվում է երեխայի անվտանգությունն ու բարեկեցությունը:** Վնասը կարող է տեղի ունենալ այն պատճառով, երբ որևէ անձ փորձում է միտումնավոր չարաշահել իր հեղինակությունը և բռնություն գործադրել երեխայի նկատմամբ: Երեխային հնարավոր է վնաս հասցնել նաև սխալ վարվելակերպի պատճառով, որը կարող է պայմանավորված լինել ոչ բավարար տեղեկացվածությամբ կամ վերապատրաստման բացակայությամբ: Նմանատիպ իրավիճակներից է երեխաների նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու անկարողությունը, չիմացությունը կամ գործողությունների չկատարումը:

1.3.3 Բռնությունը/բռնության գործադրումը դա երեխայի նկատմամբ չարաշահումը կամ վատ վերաբերմունքն է, որը կարող է հանգեցնել կամ պատճառ դառնալ երեխային վնաս հասցնելուն:

Համաձայն ԱՀԿ կողմից տրված սահմանման՝ բռնությունը ֆիզիկական ուժի կամ իշխանության (լիազորություն, դիրք) նպատակադրված կիրառումն է կամ դրա սպառնալիքը մեկ այլ անձի, խմբի կամ համայնքի նկատմամբ, որը մեծ հավանականությամբ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վնասվածքի, զրկանքի, մահվան, հոգեբանական վնասի կամ զարգացման խանգարումների:

Անձը կարող է բռնություն գործադրել երեխայի նկատմամբ՝ ստիպելով երեխային ինքն իրեն վնաս հասցնել կամ չկարողանալով կանխել որևէ մեկի կողմից երեխային վնաս պատճառելը: Երեխաները կարող են բռնության ենթարկվել իրենց ծանոթների, ընտանեկան կամ համայնքային միջավայրերում: Ավելի հազվադեպ, երեխաները կարող են բռնության ենթարկվել անծանոթների կողմից, օրինակ՝ համացանցի միջոցով: Երեխաները բռնության են ենթարկվում ինչպես մեծահասակի/ների, այնպես էլ այլ երեխայի/ների, հասակակիցների կողմից:

1.3.4 Բռնությունը կարող է տարբեր ձևեր ունենալ և ներառում է բոլոր տեսակի **ֆիզիկական, հուզական/հոգեբանական և սեռական բռնությունները, անտեսումն ու անփութ**

վերաբերմունքը, չարաշահումը և շահագործումը՝ անկախ այն հանգամանքից, թե բռնությունը հասցվել է անձամբ, թե հեռավար (առցանց):

1.3.5 Չնայած այն հանգամանքին, որ երեխայի պաշտպանության խնդիրների տեսանկյունից բռնությունը, բռնարարքը մեծահասակի կողմից վատ վերաբերմունքի դրսևորումն է երեխայի նկատմամբ, այնուամենայնիվ երեխաները նույնպես կարող են մեղավոր լինել: Դա սովորաբար տեղի է ունենում այն ժամանակ, երբ մեկ երեխա գտնվում է ավելի ուժեղ կամ ազդեցիկ դիրքում (օրինակ՝ քանի որ նա ավելի մեծ է, ունի հեղինակություն կամ իշխանություն՝ նա թիմի ավագն է) և հաճախ այս երեխային բնութագրում են որպես ագրեսիա դրսևորող (բուլինգ իրականացնող): **Բուլինգն ագրեսիայի պարբերաբար դրսևորումն է որևէ սոցիալական խմբի կողմից տվյալ խմբի որևէ անդամի կամ անդամների նկատմամբ, այդ թվում՝ բանավոր սպառնալիքներ հասցնելը, ծաղրելը, ֆիզիկական հարձակումները՝ հրելը, ծեծելը, որևէ խմբից անձին դիտավորյալ հեռացնելը և այլն:** Առանձնացվում են բուլինգի տարբեր ձևեր՝ ֆիզիկական, հոգեբանական, կիբերբուլինգ կամ համացանցային բուլինգ:

1.3.6 Բուլինգի դեպքում անհրաժեշտ է թե՛ աջակցել ագրեսիվ հարձակման ենթարկվող երեխային, թե՛ մտածել՝ ինչպես լավագույնս վարվել ագրեսիա դրսևորող երեխայի հետ, որպեսզի ոչ միայն երեխան չտուժի, այլև բարձրաձայնվի երկու երեխաների շահն ու բարեկեցությունը:

1.4 Անվտանգության առանձնահատուկ ռիսկերը ֆուտբոլում

1.4.1 Գոյություն ունեն առանձնահատուկ իրավիճակներ, երբ տեղի են ունենում վնաս հասցնելու կամ բռնության դեպքեր ֆուտբոլում:

1.4.2 **Ֆիզիկական վնասվածքները:** Յուրաքանչյուր մարզաձև ֆիզիկական վնասվածքի որոշակի ռիսկ է պարունակում, և ֆուտբոլը բացառություն չէ: Այնուամենայնիվ, հաջողության և հաղթանակի հասնելու ցանկությունը կարող է մղել ողջամտության սահմաններից դուրս գործողությունների, որը կարող է երեխաների տարիքի և կարողությունների մակարդակից վեր կամ անհամապատասխան լինել:

1.4.3 **Խաղալու/ինքնադրսևորման մղումը:** Հաղթանակը ֆուտբոլի կարևոր մասն է: Այնուամենայնիվ, երեխաներին խաղալու մղելը և հաջողության հասնելու համար նրանց ծայրահեղ ճնշման տակ դնելը կարող է երեխաների համար լինել վնասակար հոգեբանական, հուզական և ֆիզիկական առումներով:

1.4.4 **Ֆիզիկական խնամքը:** Հանդերձարանները, լոգախցիկները և սերտ ֆիզիկական շփման հետ կապված իրավիճակները (օր.՝ ֆիզիոթերապիա և/կամ այլ բուժում) բոլորը կարող են հալածանքի, ոչ պատշաճ լուսանկարների, տեսանկարահանման կամ սեռական բռնության իրավիճակներ ստեղծել:

1.4.5 **Գիշերակացով ճամփորդությունները:** Գիշերակացով ուղևորությունները կարող են շատ հավանական ռիսկեր առաջացնել, այդ թվում՝ անբավարար վերահսկողություն, երեխաների անհետացում, ակոհոլային խմիչքների կամ ոչ պատշաճ հեռուստատեսային բովանդակության հասանելիություն, սոցիալական ցանցերի օգտագործման խնդիրներ և բռնության գործադրման հավանականություն, մասնավորապես՝ սեռական բռնության:

1.4.6 Սերտ հարաբերությունները: Թիմի հարաբերությունները մարզչի և այլ օժանդակող անձնակազմի (օրինակ՝ ֆիզիոթերապևտ, բժիշկ) հետ ֆուտբոլի կարևոր և օգտակար կողմերից է: Շատ երեխաներ զարգացնում են սերտ և վստահելի հարաբերություններ իրենց մարզիչների հետ, որոնք հաճախ նշանակալի դիրք ունեցող մարդիկ են, հատկապես այն դեպքերում, երբ երեխաները չունեն դրական և աջակցող հարաբերություններ այլ մեծահասակների հետ: Անկախ այն հանգամանքից, որ շատ մարզիչներ խթանում են գորակցող/աջակցող հարաբերությունների հաստատումը, որոնք բխում են իրենց խնամքի տակ գտնվող երեխաների լավագույն շահերից, մարզիչները կարող են նաև չարաշահել այդ լիազորությունն ու վստահությունը և այդ միջոցով վնասել երեխաներին:

1.5 Ֆուտբոլից դուրս գործողությունները

1.5.1 Երեխայի պաշտպանության քաղաքականությունը կենտրոնացած է երեխաների հետ շփման գործառույթի վրա, որը տեղի է ունենում աշխատանքային գործունեության ընթացքում, և որի պատասխանատվությունը կրում է ՀՖՖ-ն, կամ ՀՖՖ-ի կողմից վերահսկվող ցանկացած սուբյեկտ/անդամ, որը գործում է ֆուտբոլի ցանկացած մակարդակում և ցանկացած հնարավորության սահմաններում:

1.5.2 Այնուամենայնիվ, ֆուտբոլային գործունեությունից դուրս դրսևորվող ոչ պատշաճ վարքը, լինի դա անհատական, թե խմբակային, կարող է ևս խախտել այս քաղաքականության մեջ նշված սկզբունքները և խարխիլել ֆուտբոլի արժեքները, ինչպիսիք են սոցիալական ցանցերում ոչ պատշաճ բովանդակությամբ նյութերի տեղադրումը կամ երեխաների հետ գաղտնի սեռական հարաբերությունները:

1.5.3 Եթե այդպիսի խնդիրներ առաջանան, դրանք պետք է զգուշությամբ ուսումնասիրվեն, և խնդրո առարկա անձի/սուբյեկտի հետ հետագա շարունակական համագործակցության վերաբերյալ ցանկացած որոշում պետք է ուղղված լինի ֆուտբոլով զբաղվող երեխաների անվտանգության ապահովմանը և նրանց շահերի պաշտպանությանը: Սա կարող է ներառել դեպքի ուղղորդում դեպի երեխաների պաշտպանության հատուկ գործակալություն կամ իրավապահ մարմիններ:

1.6 Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը համաձայն ՀՀ օրենսդրության

1.6.1 Երեխայի պաշտպանության քաղաքականությունը սահմանում է բռնությունից երեխայի պաշտպանության նվազագույն պահանջները: Այս քաղաքականության շրջանակներում ձեռնարկված բոլոր գործողությունները և պահանջները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությանը:

1.6.2 Համաձայն «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ «յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի»:

1.6.3 «Երեխայի իրավունքների և օրինական շահերի ուսնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

1.6.4 «Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից»:

1.7 Երեխայի պաշտպանության քաղաքականության հիմքում ընկած հիմնական սկզբունքները

1.7.1 Ֆուտբոլը պետք է դառնա անվտանգ, դրական և հաճելի փորձ բոլոր երեխաների համար:

1.7.2 Բոլոր երեխաներն ունեն պաշտպանված լինելու, իրենց բարեկեցության և մասնակցության խթանման հավասար իրավունքներ՝ անկախ իրենց տարիքից, սեռից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, դավանանքից, ունակության կամ հաշմանդամության մակարդակից:

1.7.3 Երեխաների պաշտպանության բոլոր գործողությունները պետք է իրականացվեն երեխաների շահերից ելնելով:

1.7.4 Բոլոր անձինք ունեն պաշտպանության պատասխանատվություն: Երեխաները կարող են նույնպես դերակատարում ունենալ իրենց և այլ երեխաների պաշտպանությանն օժանդակելու գործում, չնայած պաշտպանության հիմնական պատասխանատվությունը մնում է մեծահասակների վրա:

1.7.5 Պաշտպանության միջոցները պետք է լինեն ներառական և ոչ խտրական՝ հաշվի առնելով, որ որոշ երեխաներ (օրինակ՝ հաշմանդամություն ունեցողները) կարող են լինել բռնության ենթարկման բարձր ռիսկի տակ:

1.7.6 Կարևոր է թափանցիկությունն ու բաց լինելը. բռնության գործադրումն ու վնասների դեպքերը կարող են աճել, երբ աշխատակիցները, կամավորները, գործընկերները, երեխաները կամ ընտանիքները չեն կարողանում բարձրաձայնել իրենց խնդիրները:

1.7.7 Երեխայի անվտանգության և պաշտպանության հետ կապված բոլոր մտահոգությունները պետք է լուրջ ընդունվեն: Անհրաժեշտության դեպքում պետք է քայլեր ձեռնարկվեն երեխային պաշտպանելու ուղղությամբ, ներառյալ՝ ուղղորդում դեպի իրավապահ մարմիններ և երեխաների պաշտպանության գործակալություններ:

1.7.8 Ոչ մի կազմակերպություն չի կարող պաշտպանել երեխաներին՝ աշխատելով մեկուսացված, համագործակցությունը այլ կազմակերպությունների, պետական գերատեսչությունների (օրինակ՝ երեխաների պաշտպանության մանդատ ունեցող գերատեսչություններ և նախարարություններ) և այլ խմբերի հետ՝ անհրաժեշտություն է:

1.7.9 Մշտապես պետք է պահպանվի գաղտնիությունը, ներգրավվածների անձնական տվյալները (մտահոգություն հայտնող անձի անունը, բռնության ենթարկված երեխայի անունը և ենթադրյալ հանցագործի անունը) չպետք է բացահայտվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է տեղեկատվություն փոխանցել ի պաշտպանություն երեխայի:

1.7.10 Պաշտպանության բոլոր գործողությունները պետք է տեղի ունենան համապատասխան ազգային և միջազգային օրենքների և քաղաքականության շրջանակներում:

Նպատակ 2. Կազմակերպության պատրաստվածության և կանխարգելման հիմքերը

2.1. Երեխայի պաշտպանության քաղաքականության իրականացումը

2.1.1 ՀՖՖ-ն որոշեց հաստատել «ՀՖՖ Երեխայի պաշտպանության քաղաքականությունը»՝ համապատասխան փաստաթղթային փաթեթի և ուղեցույցների հետ միասին: ՀՀ-ում ֆուտբոլային գործունեություն ծավալող բոլոր սիրողական և պրոֆեսիոնալ ակումբներին, ֆուտբոլային կազմակերպություններին առաջարկվում է երեխաների պաշտպանության քաղաքականության սույն մոդելը: «ՀՖՖ Երեխայի պաշտպանության քաղաքականությունը» մշակվել է ՈԻԵՖԱ-ի երեխայի պաշտպանության քաղաքականության նորմերի և կանոնների հիման վրա:



Երեխայի պաշտպանության քաղաքականությունը հասանելի է բոլորին

2.1.2. Ֆուտբոլի հետ առնչվող յուրաքանչյուր անձ կամ կազմակերպություն, որը գործում է ՀՖՖ հովանու ներքո ֆուտբոլի ցանկացած մակարդակում և ցանկացած հնարավորության սահմաններում, պետք է համաձայն լինի իրականացնել այս քաղաքականությունը:

2.1.3. ՀՖՖ-ն կաջակցի սիրողական և պրոֆեսիոնալ ակումբներին համապատասխանեցնելու երեխաների պաշտպանության քաղաքականության մոդելը իրենց կազմակերպության կարիքներին: Ակումբները պարտավորվում են իրականացնել սույն քաղաքականության դրույթները և առնվազն նվազագույն պահանջները:

2.1.4 Երեխայի պաշտպանության սույն քաղաքականությունը հասանելի է բոլորին, հատկապես այն անձանց կամ կազմակերպություններին, որոնք աշխատում են ՀՖՖ-ում կամ նրա անունից՝ ներառյալ ՀՀ-ում ֆուտբոլային գործունեություն ծավալող սիրողական և պրոֆեսիոնալ ակումբները:

2.2 Երեխայի պաշտպանության ոլորտում պատասխանատու անձանց նշանակումը

2.2.1. ՀՖՖ-ն նշանակել է երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուի, որպեսզի վերջինս իրականացնի սույն քաղաքականությունը: Նշանակված պատասխանատուն ապահովելու է համագործակցությունն այլ կազմակերպությունների՝ երեխաների պաշտպանության պատասխանատուների հետ, այդ թվում՝ ՀՀ-ում գործունեություն ծավալող սիրողական և պրոֆեսիոնալ ակումբների:

2.2.2 Բոլոր սիրողական և պրոֆեսիոնալ ակումբներին խրախուսվում է նշանակել առնվազն մեկ անձի, որը կգրառվի երեխայի պաշտպանության հարցերով:

2.2.3 Երեխայի պաշտպանության պատասխանատուի դերը նրանում է, որ նա հանդես է գալիս որպես կոնտակտային և խորհրդատվական անձ, ինչպես նաև աջակցում և օգնում է կազմակերպությանը՝ պաշտպանության քաղաքականության և ընթացակարգերի իրականացման գործում, ներառյալ արձագանքումը հատուկ դեպքերի և մտահոգությունների առկայության դեպքում:

2.2.4 Երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուի դերը պետք է հանձնարարվի երեխաների պաշտպանության ոլորտում որոշակի գիտելիքներ ունեցող անձի: Սա չի նշանակում, որ այդ պատասխանատվությունը չի կարելի է հանձնել յուրաքանչյուրին, ով նվիրված է իր գործին, վայելում է թիմի հարգանքը և կարող է իրականացնել համապատասխան առաջադրանքներ: [Տե՛ս երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուի դերի և պարտականությունների ուղեցույցը]:

2.3 Աշխատակիցների ապահով ընտրությունը

2.3.1 ՀՖՖ-ն առաջարկում է ներդնել աշխատանքի ընդունման առավել ապահով ընթացակարգ՝ բացառելու բոլոր այն դեպքերը, երբ աշխատանքի համար դիմած թեկնածուն կարող է վտանգ ներկայացնել երեխաների բարօրության համար:

2.3.2 Թեկնածուի ընտրության առավել ապահով ընթացակարգերը կարող են ներառել նախընտրական, ընտրական և հետընտրական գործողություններ, որպեսզի աշխատողի ընտրության հարցում տան հնարավորինս շատ երաշխիքներ: [Տե՛ս աշխատակիցների ապահով ընտրության ուղեցույցը]:

2.3.3. Ապահովության ընթացակարգերին չհամապատասխանող անձանց աշխատանքը երեխաների հետ կանխելու համար յուրաքանչյուր թեկնածուն պետք է անցնի ապահով ընտրության բոլոր ընթացակարգերով, պետք է կատարվի անձի կենսագրության ամբողջական ստուգում, ինչպես նաև գործատուն պետք է համոզվի, որ երեխայի պաշտպանության քաղաքականության բոլոր դրույթները պահպանված են:

2.3.4 Որոշակի բացառիկ հանգամանքներում, աշխատակցի գործունեությունը կարող է սկսվել նախքան աշխատակցի ապահով ընտրության գործընթացների վերջնական ավարտը: Նման իրավիճակներում պետք է կիրառվեն լրացուցիչ միջոցառումներ (օրինակ՝ լրացուցիչ վերահսկողություն և միայնակ աշխատելու խիստ արգելք), որպեսզի կազմակերպությունը կարողանա վստահ լինել, որ երեխաների համար անվտանգության ռիսկերը նվազագույնի են հասցված:

2.3.5. Աշխատակիցների տվյալների հավաքագրմանը վերաբերող բոլոր գրառումները (օրինակ՝ հղումները) պետք է պատշաճ կերպով պահպանվեն գրասենյակում: Նմանատիպ տեղեկատվությունը պետք է պահվի, արխիվացվի և ոչնչացվի՝ համաձայն տվյալների պահպանության գործող կանոնների:

2.4 Վարքագծի կանոնները

2.4.1. ՀՖՖ աշխատակիցները և ՀՖՖ անունից հանդես եկող անձինք պետք է պահպանեն վարքագծի հստակ կանոններ: Վարքագծի կանոնները սահմանում են երեխայի պաշտպանության հիմնահարցի հետ կապված հստակ ակնկալիքները, ինչպես նաև մանրամասնում են սպասվող և արգելված վարքագիծը: [Տե՛ս երեխաների պաշտպանության քաղաքականության ձևաթղթերը համապատասխան անձանց վարքագծի կանոնների դրույթների մասին]:

2.4.2. ՀՖՖ աշխատակիցների և ՀՖՖ-ի անունից հանդես եկող անձանց մասնակցությունը ՀՖՖ-ի կողմից կամ ՀՖՖ-ի անունից կազմակերպված բոլոր գործողություններին պետք է ներառի անձի վարքագծի կանոնների սահմանում: Վարքագծի կանոնների դրույթները կարող են նշվել աշխատանքային պայմանագրերում կամ վարքագծի կանոնների մասին առանձին ձևաթղթում:

2.4.3 Վարքագծի կանոնների ցանկացած խախտում պետք է ստանա անհապաղ արձագանք: Ստացած տեղեկատվությունը պետք է պահվի գաղտնի և օգտագործվի բացառապես տեղեկատվությանը ծանոթանալու անհրաժեշտությունից ելնելով՝ աշխատանքային և իրավական պահանջներին համապատասխան:

2.4.4 Եթե վարքագծի կանոնների խախտման կասկած է առաջանում կամ դրա մասին հաղորդում է ներկայացվում, ՀՖՖ-ի երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատու անձնակազմը կարող է հետաքննության մեջ ներգրավել համապատասխան ոլորտի իմացությամբ չեզոք անձի՝ հետևելով գործող ընթացակարգերին:

2.4.5. Որպես նման խախտումների կանխարգելիչ պատասխան՝ ՀՖՖ-ն միջոցներ կձեռնարկի հանցագործի դեմ՝ երեխաների իրավունքները խախտելու և ՀՖՖ գործող կանոնակարգերի դրույթները չպահպանելու համար:

2.4.6 Երեխաների պաշտպանության ռիսկերը գնահատելու տեսանկյունից պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ անհրաժեշտ է կասեցնել հանցագործի/կասկածյալի գործունեությունը մինչև համապատասխան քննության ավարտը:

2.4.7 Վարքագծի կանոնները պետք է ներառեն հատուկ կարգապահական միջոցներ՝ կանոնները չկատարելու դեպքում: Կարգապահական միջոցներ կարող են լինել նախազգուշացումը կամ գործունեության կասեցումը, արտոնագրից զրկումը, լրացուցիչ վերապատրաստման և տեղեկացվածության բարձրացման անհրաժեշտությունը, ինչպես նաև աշխատանքից ազատումը:

2.4.8 Վարքագծի կանոնները կիրառվում են՝ չխախտելով կամ չհակասելով ցանկացած քրեական պատժամիջոցի կիրառմանը:

2.5 Վերահսկողությունը և միայնակ աշխատելը

2.5.1 Ցանկալի է նվազագույնի հասցնել երեխաների հետ միայնակ աշխատելը: Երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է առնվազն երկու մեծահասակի ներկայություն: Միշտ չէ, որ դա հնարավոր է, այնուամենայնիվ, մեծահասակները պետք է ձգտեն աշխատել բաց և թափանցիկ ձևով՝ բոլորի առջև: Այսպես հնարավոր կլինի ապահովել մեծահասակների հանդեպ վերահսկողությունը: Ցանկալի է աշխատել երեխաների խմբերի հետ, ոչ թե անհատապես:

2.5.2 Հաշվի առնելով իրավիճակը, երեխաների տարիքը և կարողությունները՝ մշտապես բավականաչափ մեծահասակներ պետք է ներկա գտնվեն մարզմանը, խաղին կամ որևէ այլ հանդիպմանը՝ ապահովելու երեխաների նկատմամբ պատշաճ վերահսկողությունը: Վերահսկողության իրականացման և միայնակ աշխատանքի հետ կապված խնդիրները պետք է մշտապես դիտարկվեն որպես ցանկացած տիպի ռիսկի գնահատման գործընթացի մաս:

2.5.3 ՀՖՖ-ն առաջարկում է մեծահասակ-երեխաների հետևյալ հարաբերակցությունը՝

- ✓ 13-ից 18 տարեկան յուրաքանչյուր 10 երեխայի դեպքում՝ 1 մեծահասակ,
- ✓ 9-ից 12 տարեկան յուրաքանչյուր 8 երեխայի դեպքում՝ 1 մեծահասակ,
- ✓ 5-ից 8 տարեկան յուրաքանչյուր 6 երեխայի դեպքում՝ 1 մեծահասակ,
- ✓ 4 տարեկան և ցածր տարիքի յուրաքանչյուր 3 երեխայի դեպքում՝ 1 մեծահասակ:

2.5.4 Եթե մեծահասակների թիվը բավարար չէ պահանջվող վերահսկողության մակարդակն ապահովելու համար, ապա անհրաժեշտ է դադարեցնել/չեղարկել գործունեությունը:

2.5.5 Եթե մատուցվում է բժշկական, ինտիմ խնամքի կամ որևէ այլ ծառայություն, որը ներառում է երեխայի հետ անմիջական ֆիզիկական շփում, ապա երեխաները իրավունք ունեն պահանջել այլ երեխայի կամ մեծահասակի ներկայություն իրենց կողքին:

2.5.6 Անչափահաս երեխայից հակադրադինգային նմուշներ հավաքելու համար կան որոշակի հատուկ պահանջներ, որոնք պետք է պահպանվեն դրաինգ-թեսթ անցկացնելու ընթացքում: Ընտրված անչափահաս մարզիկներին պետք է մեծահասակների ներկայությամբ տեղեկացնեն իրենց նկատմամբ դրաինգ-թեսթ անցկացնելու անհրաժեշտության մասին: Անչափահաս մարզիկները կարող են պահանջել դրաինգ-թեսթի անցկացման ամբողջ ժամանակահատվածում թիմի ներկայացուցչի ուղեկցում: Եթե նմուշը հավաքելու ժամանակ անչափահաս մարզիկը հրաժարվում է ներկայացուցչի ներկայությունից, ապա մեզի նմուշների տրամադրման ժամանակ դրաինգ-թեսթ անցկացնողի կողքին պետք է լինի մարդ՝ վկա, ով կվերահսկի դրաինգ-թեսթ իրականացնող սպային:

2.5.7 ՀՖՖ-ի մրցույթներին մասնակցող բոլոր ակումբները պարտավորվում են ապահովել, որ «երեխաների վարքագծի կանոնների և համաձայնության թերթիկը» պատշաճ կերպով լրացվի և ստորագրվի յուրաքանչյուր անչափահաս մասնակցի համար: Լրացված ձևաթղթերը պետք է պատշաճ կերպով պահվեն համապատասխան ակումբներում և ներկայացվեն ՀՖՖ ըստ պահանջի:

2.5.8 Երեխաներին չպետք է մատուցվի անհատական խնամք (օրինակ՝ լվացում), եթե նրանք կարողանում են դա ինքնուրույն անել:

2.5.9 Հանդերձարանները, ցնցուղները և այլ նմանատիպ ենթակառուցվածքները պետք է մշտապես վերահսկվեն, բայց այնպես, որ ապահովված լինի երեխաների անձնական

տիրույթը (պաշտպանվածությունը): Միայն երեխաների հսկողության համար պատասխանատու մեծահասակները կարող են գտնվել հանդերձարանում՝ մինչ երեխաները փոխվում են: Ուրիշ ոչ ոք (օրինակ՝ լուսանկարիչները) չեն կարող գտնվել հանդերձարանում, մինչ երեխաները փոխվում են: Բոլոր այլ անձինք, եթե այդպիսիք կան, պետք է նախապես տեղեկանան, թե երբ կարող են ներս մտնել հանդերձարան կամ դուրս գալ:

2.5.10 Գիշերակացով ճամփորդությունների ընթացքում (օրինակ՝ արտագնա հանդիպումների և ուսումնամարզական հավաքների ժամանակ), երեխաները չպետք է վերահսկող մեծահասակի/ների հետ քնեն միևնույն սենյակում, բացառությամբ այն դեպքերի, երբ մեծահասակը երեխայի ծնողն/բարեկամն է, կամ մեծահասակը երեխայի օրինական ներկայացուցիչն է՝ լիազորված երեխայի ծնողների կամ խնամակալների կողմից:

2.5.11 Ակումբի կողմից պետք է սահմանվի հստակ ընթացակարգ այն իրավիճակների համար, երբ երեխան կորում կամ անհետանում է, կամ ծնողը/խնամակալը չի գալիս երեխայի ետևից:

2.5.12 Եթե երեխան կարող է միայնակ մեկնել միջոցառումների կամ վերադառնալ, այդ մասին գրավոր թույլտվություն պետք է տրվի նրա ծնողի կամ մեկ այլ անձի կողմից, որը լիազորված է տալ այդպիսի թույլտվություն (օրինակ՝ խնամակալ):

2.6 Այցելուների/ԶԼՄ-ների ներկայացուցիչների ներկայությունը ՀՖՖ մանկապատանեկան մրցումներին և այլ միջոցառումներին

2.6.1. ՀՖՖ-ն և ՀՖՖ-ի անունից լիազորված բոլոր անձինք, որոնք անցկացնում են ՀՖՖ մանկապատանեկան մրցումները, պետք է հետևեն, որ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցումների ցանկացած այցելու, որի համար նրանք պատասխանատու են (ներառյալ ԶԼՄ-ների ներկայացուցիչները), տեղյակ լինի և հասկանա երեխայի պաշտպանության քաղաքականության սկզբունքները և համաձայնվի դրա պայմանների կատարման հետ:

2.6.2 Այցելուներին (ներառյալ ԶԼՄ-ների ներկայացուցիչներին) պետք է միշտ ուղեկցել: Նրանք կարող են երեխաների հետ միայնակ գտնվել միայն բացառիկ հանգամանքներում (օրինակ՝ հետազոտություն իրականացնելիս): Նման դեպքերում պետք է ձեռնարկվեն լրացուցիչ նախազգուշական միջոցներ, որպեսզի այցելուն կամ դիտորդը որևէ վտանգ չներկայացնի երեխաների համար:

2.6.3. Երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը չպետք է վտանգվի լրատվամիջոցների հետ գործ ունենալիս: Մասնավոր/անձնական տեղեկությունները, ինչպիսիք են բնականության հասցեները, չպետք է տրվեն լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

2.6.4 Լրատվամիջոցները և այլ անձիք պետք է թույլտվություն ստանան երեխայի, ինչպես նաև նրա ծնողի կամ պատասխանատու անձի կողմից՝ վերջինիս նկարները և պատմությունները օգտագործելու համար:

2.6.5. Երեխաների նկարները, որոնք շահագործող կամ վիրավորական բնույթ են կրում (ներառյալ այն նկարները, որտեղ երեխան ամբողջությամբ հագնված չէ) չպետք է օգտագործվեն կամ շրջանառվեն:

2.7 Առցանց պաշտպանությունը և անվտանգությունը

2.7.1 Անհրաժեշտ է կատարել ռիսկերի գնահատում՝ պարզելու, թե ինչպես է տեխնոլոգիաների և լրատվամիջոցների օգտագործումը ազդում երեխաների անվտանգության վրա, ինչպես նաև սահմանել այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն այդ ռիսկերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:

2.7.2 Երեխաների պաշտպանության համատեքստում տրամադրվում են ուղեցույցներ՝ տեխնոլոգիաների պատշաճ օգտագործման (ինտերնետ, բջջային հեռախոսներ, սոցիալական ցանցեր և այլն)՝ և սույն քաղաքականության իրագործման վերաբերյալ: **[Տե՛ս երեխայի պաշտպանության քաղաքականության ուղեցույցն առցանց պաշտպանության և անվտանգության վերաբերյալ]:**

2.7.3 Այն վայրերում, որտեղից երեխան մուտք կգործի համացանց, պետք է տեղադրվեն գտիչներ և արգելափակող ծրագրակազմ, որպեսզի կասեցվի ոչ պիտանի, վիրավորական նյութերի հասանելիությունը: Այն կայքերը, որոնք անարգել տարածում են երեխաների նկատմամբ բռնության գործադրման նյութեր կամ պարունակում են երեխաների համար վնասակար պատկերներ և տեղեկատվություն, պետք է արգելափակվեն:

2.7.4 Վիրավորական նյութեր կամ ոչ պատշաճ բնույթի հաղորդագրություններ ստանալու դեպքում անհրաժեշտ է տեղեկացնել երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուին կամ SS անվտանգության թիմին, որպեսզի նրանք կարողանան բարելավել համացանցի անվտանգությունը: Նմանատիպ ինֆորմացիայի մասին անհրաժեշտ է տեղեկացնել նաև համապատասխան իրավապահ մարմիններին: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ վերոնշյալ բնույթի նյութերը կամ հաղորդագրությունները չպետք է ուղարկվեն էլեկտրոնային եղանակով, քանի որ միջազգային իրավունքի տեսանկյունից դա ևս կարող է հանցագործություն հանդիսանալ:

2.8 ՀՖՖ-ի գործընկերների հետ հարաբերությունները

2.8.1 Հատուկ ուշադրություն պետք է դարձնել երեխաների պաշտպանությանը վերաբերող հարցերին: Երեխայի պաշտպանության միջոցների վերաբերյալ հատուկ հղումներ պետք է ներառվեն գործընկերության համաձայնագրերում և պայմանագրերում: Պետք է հստակություն լինի նաև այն գործողությունների վերաբերյալ, որոնք ձեռնարկվելու են երեխայի պաշտպանության ցանկացած մտահոգության առաջացման դեպքում:

2.8.2 Եթե երեխայի պաշտպանությանը վերաբերող մտահոգություններ են առաջանում ՀՖՖ գործընկերոջ հետ կապված, անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն մտահոգությունները պատկան մարմիններին հաղորդելու հանգամանքը, այլև դիտարկել գործընկերությունը կասեցնելու հարցը: Գործընկերության պայմանագրում համաձայնեցված ընթացակարգերը պետք է մշտապես պահպանվեն:

2.8.3 Եթե գործընկերը կասկածվում է երեխայի պաշտպանության սկզբունքները խախտելու մեջ, դա ինքնաբերաբար չի նշանակում, որ պետք է դադարեցվի գործընկերությունը: Գործընկերությունը շարունակելու ցանկացած որոշում պետք է կայացվի՝ հաշվի առնելով գործընկերոջ արձագանքը և իրավիճակը կարգավորելու նրա ցանկությունը:

Նպատակ 3: Իրազեկումը

3.1 Իրազեկության բարձրացումը և վերապատրաստումը

3.1.1. ՀՖՖ աշխատակիցները և ՀՖՖ-ի անունից հանդես եկող յուրաքանչյուր անձ կամ կազմակերպություն՝ ներառյալ սիրողական և պրոֆեսիոնալ ակումբները, ինչպես նաև համայնքները, ընտանիքները, երեխաները և այլ շահագրգիռ կողմերը, պետք է տեղյակ լինեն երեխայի պաշտպանության քաղաքականության մասին և պատկերացնեն, թե ինչպես ճանաչեն երեխայի նկատմամբ բռնության գործադրումը և զեկուցեն առաջացած մտահոգությունների մասին:



3.1.2 ՀՖՖ-ն շարունակաբար կանցկացնի իրազեկման հատուկ դասընթացներ սիրողական և պրոֆեսիոնալ ակումբների, մարզիչների, մրցավարների, ինչպես նաև ծնողների և երեխաների համար:

3.1.3 Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքի վրա, թե ինչպես կարելի է բարձրացնել այս քաղաքականության մասին երեխաների տեղեկացվածությունը և այն եղանակները, որոնց միջոցով երեխաները կարող են ապահովել իրենց անվտանգությունը: Դա կարող է լինել երեխաների հետ համագործակցության արդյունքում վերապատրաստման և իրազեկող դասընթացների մշակումը:

3.1.4 Երեխայի բարեկեցության, պաշտպանության և անվտանգության վերաբերյալ մասնագետների պատրաստումը կարելի է իրականացնել ըստ աշխատանքի բնույթի, ըստ համապատասխան խմբերի՝ անձնակազմ, մարզիչներ, մրցավարներ, կամավորներ և այլն:

3.1.5 ՀՖՖ-ն պարբերաբար կտրամադրի թարմացումներ երեխայի պաշտպանության հիմնախնդրի վերաբերյալ, ինչպես պաշտոնապես, օրինակ՝ վերապատրաստման կամ

վերահսկողության ձևով, այնպես էլ ոչ պաշտոնապես, օրինակ՝ թիմային հանդիպումների կամ քննարկումների միջոցով:

3.1.6 Թեպետ ՀՖՖ-ն առաջնորդում և տրամադրում է ուսուցում սույն քաղաքականության հիման վրա աշխատակիցների ստանձնած պարտավորությունների և պատասխանատվության վերաբերյալ, այնուամենայնիվ բոլոր չափահաս աշխատողներն իրավունք ունեն պարզելու իրենց աշխատանքային դերի հետ կապված ակնկալիքները, եթե պարզ չեն պատկերացնում դրանք: Նման հարցերի դեպքում անհրաժեշտ է դիմել ՀՖՖ երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուին:

3.1.7 Անցկացվող բոլոր ուսումնական և ներածական պարապմունքների վերաբերյալ գրառումները ու զեկույցները՝ ներառյալ ամսաթվերը և մասնակիցների ցուցակները, անհրաժեշտ է պահել՝ ըստ տվյալների պահպանման գործող ընթացակարգերի:

3.2 Ռիսկերի գնահատումը

3.2.1 Ռիսկերի գնահատումը երեխաների պաշտպանության ցանկացած գործընթացի էական տարրն է: Այն հիմք է հանդիսանում կանխարգելիչ գործողությունների համար, որպեսզի հնարավոր լինի համոզվել, որ գործողություններն անվտանգ են, և հայտնաբերված բոլոր ռիսկերը վերացվում կամ նվազագույնի են հասցվում: Ռիսկերի գնահատումը սահմանում է նաև երեխայի անվտանգությանը սպառնացող մտահոգության ի հայտ գալու դեպքում ձեռնարկվող հատուկ գործողությունները:

3.2.2 Միջոցառումներ կազմակերպելիս (օրինակ մրցումներ), պետք է իրականացվի ռիսկերի գնահատում հնարավոր վտանգները բացահայտելու համար, և մշակվի պլան՝ այդ ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Ռիսկերի գնահատման պատասխանատվությունը ստանձնում է միջոցառման պատասխանատու անձը: [Տե՛ս հատուկ ռիսկերի գնահատման թերթիկը]

3.2.3 Եթե գնահատումը եզրակացնում է, որ չափազանց շատ ռիսկեր կան, որոնք հնարավոր չէ հասցնել ընդունելի մակարդակի, ապա միջոցառումը պետք է չեղարկվի/հետաձգվի:

3.2.4 Նախքան ցանկացած ֆիզիկական գործողություն սկսելը անհրաժեշտ է հավաքել երեխաների կոնտակտային տվյալները և բժշկական տեղեկությունները: Այդ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի միջոցառման ժամանակ երեխաների խնամքի պարտականություն ունեցող յուրաքանչյուր անձի:

3.2.5 Ռիսկերի կառավարման միջոցառումները պետք է պարբերաբար վերանայվեն ինչպես գործունեության ընթացքում, այնպես էլ գործունեության ավարտին, որպեսզի ընդգծվեն առաջացած սխալները կամ թերացումները և կատարվեն անհրաժեշտ փոփոխությունները:

3.3 Մտահոգություն հայտնելու համար հաղորդակցման անվտանգ ուղիների ստեղծումը

3.3.1 Անհրաժեշտ է սահմանել մտահոգությունների մասին զեկույցելու հստակ ընթացակարգ: Ընթացակարգի մասին պետք է տեղեկացնել և այն հասանելի դարձնել կազմակերպության հետ առնչվող բոլոր անձանց, ներառյալ երեխաներին, ընտանիքներին և համայնքներին:

3.3.2 Կազմակերպության՝ երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուն հանդիսանում է մտահոգությունների մասին տեղեկություն ստացող հիմնական կոնտակտային անձը:

3.3.3 Մտահոգության առաջացման դեպքում գործողությունների հաջորդականության սխեման և դրա հետ կապված ընթացակարգերը պետք է քննարկվեն և համաձայնեցվեն երեխաների պաշտպանության գործակալությունների և իրավապահ մարմինների հետ՝ գործընթացների համահունչ ապահովման համար [տե՛ս նաև Նպատակ 4-ը]:

3.3.4 ՀՖՖ-ն հնարավորություն կտա բարձրաձայնել մտահոգությունները (ներառյալ անանուն զեկուցումը): Գրավոր բողոքները կարող են ուղարկվել ինչպես ՀՖՖ երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուին, այնպես էլ մտահոգությունները կարող են ուղղակիորեն հաղորդվել ՀՖՖ-ի կողմից վստահված որևէ այլ անձի կամ կազմակերպության:

3.3.5 ՀՖՖ-ն երաշխավորում է գործընթացի և փաստաթղթերի ամբողջական գաղտնիությունը ոչ պաշտոնական ընթացակարգի շրջանակներում:

3.3.6 Եթե չհիմնավորված հարց/մտահոգություն է առաջ քաշվել, ապա չպետք է պատժիչ գործողություն ձեռնարկել այդ մտահոգությունը հայտնաձևող անձի նկատմամբ՝ պատճառաբանելով, որ վերջինս ունեցել է չարամիտ մտադրություն:

3.3.7 Ստացված բոլոր մտահոգությունները/դիմումները (նույնիսկ անորոշ լուրերը) երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուն պետք է պատշաճ կերպով պահի անվտանգ, գաղտնի վայրում:

3.3.8 Հնարավոր մտահոգությունների մասին բոլոր զեկույցները կստանան պատշաճ պատասխան՝ համաձայն երեխայի պաշտպանության քաղաքականության և սահմանված ընթացակարգերի [տե՛ս նաև Նպատակ 4-ը]:

Նպատակ 4. Համագործակցությունը և մտահոգությունների հայտնումը

4.1 Կապի ստեղծումը երեխայի պաշտպանության գործակալությունների հետ

4.1.1 Ոլորտում գործող երեխայի պաշտպանության գործակալությունների և իրավապահ մարմինների հետ կապերի հաստատումն անհրաժեշտություն է, որպեսզի մտահոգությունների առաջացման դեպքում հնարավոր լինի ուղղորդել մասնագիտական խորհրդատվության և աջակցության: Կապի հաստատումն անհրաժեշտ է նաև մտահոգության մասին հաղորդելու դեպքում ոստիկանության և համապատասխան գերատեսչությունների կողմից համապատասխան ընթացակարգերի հաստատման համար:

4.1.2 Ուղղորդումները հեշտացնելու նպատակով անհրաժեշտ է նախապես կապեր հաստատել երեխայի պաշտպանության գործակալությունների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ՝ հատկապես համայնքային մակարդակում: Դեպքի/մտահոգության մասին հնարավորինս արագ և արդյունավետ զեկուցելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ մշտապես ունենալ համապատասխան անձանց կոնտակտային տվյալները:

4.1.3 ՀՖՖ-ն խրախուսում է երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուներին, ինչպես նաև ֆուտբոլի բնագավառում աշխատող այլ անձանց մշտապես հաճախել երեխաների պաշտպանության և անվտանգության մասին դասընթացների, որոնք կառաջարկեն ՀՖՖ-ն կամ այլ իրավասու կազմակերպությունները:



4.2 Բաց աշխատանքային միջավայրի ստեղծումը

4.2.1 Երեխայի պաշտպանության վերաբերյալ աջակցության կամ խորհրդի խնդրանքը պետք է լուրջ ընդունվի: Խորհրդատվության կամ օգնության դիմելը երբեք չպետք է ընկալվի որպես գիտելիքի կամ կարողության պակաս, կամ լուրեր տարածելու փորձ:

4.2.2 ՀՖՖ-ի աշխատակիցները կամ ՀՖՖ-ի անունից հանդես եկող անձինք, որոնք ներգրավված կլինեն երեխայի պաշտպանության հետ կապված միջադեպում որպես հետաքննության առարկա, կամ որպես վկա, նրանց պետք է տրամադրել պատշաճ աջակցություն: Սա կարող է ներառել լրացուցիչ վերահսկողություն կամ խորհրդատվություն:

4.3 Դեպքերի հաղորդումը և ձեռնարկվող հետագա միջոցառումները

4.1.4 Բոլոր դեպքերի հաղորդումը/զեկուցումը, հետաքննությունն ու երեխայի պաշտպանության դեպքերի կառավարումը պետք է համապատասխանի ազգային օրենսդրությանը: Երեխայի պաշտպանության հարցը որևէ գործակալության ուղարկելուց առաջ անհրաժեշտ է հաշվի առնել գործող իրավական դաշտը, ինչպես նաև երեխայի շահերը և ցանկությունները:

4.1.5 Հարկավոր է ներգրավել միայն այն մարդկանց, որոնց մասնակցությունն անհրաժեշտ է մտահոգությունները քննելու կամ երեխային աջակցություն տրամադրելու համար՝ լինի դա բժշկական կամ հոգեբանական: Յուրաքանչյուր միջամտության մասին պետք է կազմել արձանագրություն, ստորագրել ներգրավված անձանց կողմից և ուղարկել ՀՖՖ-ի երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուին:

4.1.6. Երեխաների պաշտպանության տեղական գործակալություններին և իրավապահ մարմիններին հասցեագրված դեպքերը պետք է կատարվեն համապատասխան մարմնի կողմից սահմանված կարգով. օրինակ՝ գործակալությունները կամ ոստիկանությունը կարող են ունենալ հաշվետվությունների ձևաչափ: Եթե ուղղորդումը կատարվում է բանավոր, ապա այն պետք է հաստատվի նաև գրավոր:

Նպատակ 5. Հաջողության չափումը երեխայի պաշտպանության ոլորտում

5.1 Վերահսկողության իրականացումը

5.1.1 Երեխայի պաշտպանության քաղաքականության իրականացման գլխավոր պատասխանատուն ՀՖՖ-ի երեխայի պաշտպանության հարցերով զբաղվող թիմն է:


5.1.2 Առնվազն տարին մեկ անգամ ՀՖՖ-ն կգնահատի իր պաշտպանության քաղաքականության իրականացումը առկա գնահատման ձևաթղթին համապատասխան:

5.1.3 Գնահատման հիման վրա կկազմվի տարեկան գործողությունների ծրագիր, որպեսզի վերացվեն քաղաքականության բացթողումները և նվազագույնի հասցվեն հայտնաբերված ռիսկերը:

5.1.4 Առնվազն երեք տարին մեկ ՀՖՖ-ն կխնդրի ֆուտբոլային ակումբներին գնահատել իրենց կազմակերպությունում տիրող իրավիճակը, որպեսզի ունենա երեխայի պաշտպանության հարցերի հետ կապված համընդհանուր պատկեր ՀՀ տարածքում:

5.1.5 Երեխայի պաշտպանության քաղաքականությունը կվերենայվի երեք տարին մեկ:

5.1.6 ՀՖՖ-ն կարող է պարբերաբար պահանջել երեխայի պաշտպանության քաղաքականության և գործող ընթացակարգերի իրականացման գնահատում անկախ կառույցների կողմից:



Հաջողության չափումը հնարավոր է աշխատանքի գնահատման միջոցով

6. Վերջնական դրույթներ

6.1.1 ՀՖՖ Գործադիր կոմիտեն ընդունեց սույն քաղաքականությունը **00.07.2021** թվականին և այն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: ՀՖՖ Գործադիր կոմիտեն լիազորություն է տալիս ՀՖՖ վարչակազմին հաստատել ցանկացած հրահանգներ և այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են սույն քաղաքականությունը իրագործելու համար:

6.1.2 Երեխայի պաշտպանության քաղաքականությանը վերաբերող բոլոր հարցերի դեպքում անհրաժեշտ է դիմել ՀՖՖ երեխայի պաշտպանության հարցերով պատասխանատուին հետևյալ էլեկտրոնային հասցեով childsafeguarding@ffa.am կամ լրացնել առցանց դիմում www.ffa.am կայքի երեխայի պաշտպանության բաժնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ԽԱՆՁՅԱՆ ՓՈՂՈՑ 27

ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ

+374 10 30 50 50

childsafeguarding@ffa.am

www.ffa.am